ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.11.2014թ.
232-ի 1

ՀՀ սփյուռքի նախարար
տիկին Հրանուշ Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Հակոբյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ ծառայողական ավտոմեքենա է սպասարկում ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմին (ներառյալ նախարարին սպասարկող ծառայողական ավտոմեքենան),
2. Որքա՞ն է կազմել ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմին (ներառյալ նախարարին) սպասարկող ծառայողական ավտոմեքենաների բենզինի ծախսը 2014թ.-ի օգոստոս եւ սեպտեմբեր ամիսների համար,
3. Խնդրում ենք բենզինի ծախսը նշել լիտրերով եւ ՀՀ դրամով յուրաքանչյուր ամսվա համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան